«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 1290-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N --------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 1290-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը սահմանելու մասին» N 1290-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետում «(այսուհետ՝ վարչություն)» բառերը փոխարինել «(այսուհետև՝ վարչություն), իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը (այսուհետ՝ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ)» բառերով, իսկ նույն կետի 2-րդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել,

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրն ստանալուց հետո վարչությունը, իսկ օտարերկրյա պետություններում՝ դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը 10-օրյա ժամկետում անձին ուղարկում է գրավոր ծանուցում՝ ձև 1-ի համաձայն, եթե դիմումատուն հարցաթերթիկում չի լրացրել իր բջջային հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային փոստի հասցեն և եթե տվել է իր համաձայնությունը՝ ծանուցումները էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու վերաբերյալ։»,

3) 3-րդ կետով սահմանված ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

ՎԱՐՉԱՊԵՏ

« » _____ 2022թ.

ք. Երևան

_

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

----------ի N ------Ն որոշման

« Ձև 1

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Հարգելի _____

(ծանուցվողի անունը, ազգանունը)

Տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով Ձեզ շնորհվել է ՀՀ քաղաքացիությունուն: Երդման արարողությանը մասնակցելու և ՀՀ քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ ստանալու դիմում ներկայացնելու համար յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը _____ը կարող եք ներկայանալ՝

- Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն _____, թիվ

/Հասցե/

_____ աշխատասենյակ.

- օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ _____

/անվանումը, հասցեն/

թիվ _____ աշխատասենյակ։

_____ _____

Ծանուցումն ուղարկող ծառայության անվանումը օր, ամիս, տարեթիվ »: